

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

«Արմինե Հոլստեիյան Էլբեկի» Ա/Ձ-ն «ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-26/11» ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	<p>Ամառային կոստյումը բաղկացած է բաճկոնից և տաբատից: Բաճկոն Արտաքին (հիմնական) գործվածքը բաղադրությունը՝ 95-98% բամբակ 2-5% արհեստական մանրաթելերի առկայությամբ, մակերեսային խտությունը՝ 300-350 գր/մ2: Ներքին գրպանների գործվածքի բաղադրությունը՝ 95-98% բամբակ 2-5% արհեստական մանրաթելերի առկայությամբ, մակերեսային խտությունը՝ 300-350 գր/մ2: Գրպանները ներքնակները լինեն ֆիքսված եզրամասերում, որը կկանխի կախվածքը: Կտորը լինի ձգվող ջինսե գործվածքից (դենիմ թվիլ հյուսվածք/twill fabric)՝ նախնական կծկում անցած (pre-shrink) տեսակի: Գույնը՝ մուգ կապույտ (հիմնական), կարմիրի համադրությամբ, որոնց երանգները համաձայնեցնել պատվիրատուի հետ: Բաճկոնի կրծքավանդակի, գրպանների վերևի (եզրային) ու մեջքի հատվածներում, գեղեցիկ համադրությամբ և համաչափությամբ պետք է լինի 0.5-1 սմ լայնությամբ լուսանդրադարձնող ժապավեններ (համաձայնեցնել պատվիրատուի հետ): Բաճկոնը լինի ուղիղ, կենտրոնական խոշոր և շոշափելիորեն նուրբ ատամներով կայծակ-շղթայով, որը պետք է լինի համապատասխան բաճկոնի գույնի (թե ատամները, թե գործվածքը և թե բոնիչը) (համաձայնեցնել պատվիրատուի հետ): Բաճկոնի թևերի մանժետները պետք է լինեն ուղիղ և ունենան ձեռքով կառավարվող հանգույցներ կաչուն ժապավենով: Բաճկոնը պետք է ունենա 3 գրպան, որից կրծքավանդակի ձախ մասում՝ 1 գրպան՝ ուղղահայաց շղթայով՝ ոչ մանր և շոշափելիորեն նուրբ ատամներով կայծակ-շղթայով, որը պետք է լինի համապատասխան բաճկոնի գույնի հետ (թե ատամները, թե գործվածքը և թե բոնիչը) և որի վրա պետք է լինի (badge)-ի համար նախատեսված համապատասխան հանգույց, 2 կողքային գրպան թեքված մուտքով (համաձայնեցնել</p>

պատվիրատուի հետ): Բաճկոնի մեջքի թիկունքի վերևի կենտրոնական մասում պետք է դաշվի ԲԵՑ-ի լոգոն ամբողջությամբ համապատասխան գունային գամայի և դիզայնի: Լոգոյի չափերը պետք է լինեն համաչափ և լավ տեսանելի (համաձայնեցնել պատվիրատուի հետ): Կարերը լինեն բարձր երկակի ամրության, իրարից 7-8 մմ հեռավորության վրա: Բաճկոնի ներսամասում փակցնել համազգեստի պիտակ, որի վրա պետք է նշված լինի՝ Արտադրող կազմակերպության անվանումը, Չափսը (Եվրոպական և/կամ ամերիկական սանդղակով), Գործվածքի բաղադրությունը, Խնամքի վերաբերյալ տեղեկությունը: Տաբատ Կտորի բաղադրությունը՝ 95-98% բամբակ 2-5% արհեստական մանրաթելերի առկայությամբ, մակերեսային խտությունը՝ 300-350 գր/մ2: Ներքին գրպանների գործվածքի բաղադրությունը՝ 95-98% բամբակ 2-5% արհեստական մանրաթելերի առկայությամբ մակերեսային խտությունը՝ 300-350 գր/մ2: Տաբատը լինի ուղիղ ձևածքով: Տաբատի գուլֆիկը կայծակ-շղթայով՝ ոչ մանր և շոշափելիորեն նուրբ ատամներով կայծակ-շղթայով, որը պետք է լինի համապատասխան տաբատի գույնի (թե ատամները, թե գործվածքը և թե բոնիչը) և կոճակով (համաձայնեցնել պատվիրատուի հետ): Կտորը լինի ձգվող ջինսե գործվածքից (դենիմ թվիլ հյուսվածք/twill fabric)՝ նախնական կծկում անցած (pre-shrink) տեսակի: Գույնը՝ մուգ կապույտ: ծնկամասից ներքևի հատվածում պետք է լինի 0.5-1 սմ լայնությամբ լուսանդրադարձնող ժապավեն (համաձայնեցնել պատվիրատուի հետ): Տաբատը պետք է ունենա 3 գրպան, որից 2-ը՝ կողքային թեքված մուտքով, իսկ հետևի 1 գրպան ուղիղ մուտքով: Մշակված լինի 4.0-4.5 սմ լայնության գոտիով: Գոտու վրա մշակված են 7 հատ կամրջակներ, որոնցից մեկը պետք է մշակված լինի գոտկատեղի հետևամասի միացման կարի վրա, ինչպես նաև 2 հատ ներկարված՝ 6.5-7.0 սմ երկարության և 3,5 -4 սմ լայնության չափսը կարգավորելու համար նախատեսված ախլակներ, որոնք կոճկվում են 1 օղակով և 2 հատ կոճակով: Կարերը լինեն բարձր երկակի ամրության, իրարից 7-8 մմ հեռավորության վրա: Տաբատի ներսամասից՝ գոտու ներքին եզրի տակից, պետք է կարված լինի պիտակ, որի վրա պետք է նշված լինի՝ Արտադրող կազմակերպության անվանումը, Չափսը (Եվրոպական և/կամ ամերիկական սանդղակով), Գործվածքի բաղադրությունը, Խնամքի վերաբերյալ տեղեկությունը: Փաթեթավորումը՝ լինի հակերով, մեկ հակի մեջ 10 լրակազմ, պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 լրակազմ: Պոլիէթիլենային պարկի մեջ լրացուցիչ պետք է լինի նաև պիտակ, որի վրա նշված լինի կոստյումի չափսերը: Ապրանքի տեղափոխումն ու բեռնաթափումն իրականացնում է մատակարարը: Ապրանքները պետք է լինեն չօգտագործված: Մասնակիցը պետք է համաձայնեցնի պատվիրատուի հետ՝ ամառային կոստյումի օգտագործվող գործվածքների/պարագաների, ինչպես նաև հետագայում սմուլչի մեկ օրինակ: Յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար մատակարար կազմակերպությունը պարտավոր է իր միջոցների հաշվին ներկայացնել Հայաստանի Հանրապետությունում արտոնագրված, իսկ անհրաժեշտության դեպքում նաև Ետալոնային փորձագիտական լաբորատորիայի կողմից տրված բաճկոնի գործվածքի մակերեսային խտության և բաղադրության

վերաբերյալ փորձագիտական արձանագրություն: Ինչպես նաև արտադրանքի գործվածքների (համաձայն սխեմատիկ պատկերի տրամադրված Արտադրողի/Վաճառողի կողմից) տոքսիկոլոգյան ինդեքսը ջրի և օդի միջավայրերում համապատասխան թեթև արդյունաբերության արտադրանքի անվտանգության մասին ՄՄ ՏԿ 017/2011 փաստաթղթի պահանջի համաձայն: Վերոնշյալ լաբորատորիաներում փորձաքննության անհնարինության դեպքում ներկայացնել վերոնշյալ ցուցանիշների վերաբերյալ արձանագրություն «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի, դրա անհնարինության դեպքում ԵԱՏՄ շրջանակներում գործող հավատարմագրված փորձարկման լաբորատորիայից: Ընդ որում նմուշառումը պետք է իրականացվի ընդունող ստորաբաժանում մատակարարված խմբաքանակից՝ լաբորատորիայի կողմից գործուղված համապատասխան ներկայացուցչի մասնակցությամբ: ԵԱՏՄ փորձագիտական լաբորատորիաների մասով նմուշառման համար լաբորատորիայի համապատասխան մասնագետի ներկայությունը պարտադիր չէ: Արձանագրությունը պետք է կազմված լինի հետևյալ ցուցանիշների վերաբերյալ՝ Կտորի բաղադրությանը՝ 95-98% բամբակ, 2-5% արհեստական մանրաթելերի առկայություն, Մակերեսային խտությունը՝ 300-350 գր/մ2: Ամառային հանդերձանքի քանակները/չափսերը լրացուցիչ կտրամադրվեն պատվիրատուի կողմից: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Ամառային հագուստի կապույտ, կարմիր և ծիրանագույն երանգները համաձայնեցնել պատվիրատուի հետ: Մատակարարը պետք է Պատվիրատուին ներկայացնի չափաբաժնի ընդհանուր քանակները, գումարած չափաբաժնից մեկ օրինակ՝ լաբորատոր փորձաքննության համար:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

И / П Армине Овсепян Элбек в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом «ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-26/11»
ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	